



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«ԱՐԵՎԻԿԱ» ԿՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ



*Ա. ՄԻՆԱՍՅԱՆ*  
Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«03» 05 2017թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 43

**Ձեռնարկողը՝**

**<<Քաղաքաշինության գիտահետազոտական և  
նախագծային ինստիտուտ>> ԲԲԸ**  
*Ք. Երևան, Դ. Անհաղթի 23*

**Գործունեությունը՝**

**Բյուրեղավան համայնքի /բնակավայրի/ պարզեցված  
գլխավոր հարակազծի շրջակա միջավայրի  
վրա ազդեցության գնահատման հաշվեքվություն**  
*<< Կոտայքի մարզ*

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈՒՄԻ**  
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

թիվ ԲՓ 43

«23» 05 2017թ.

**ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝ <<Քաղաքաշինության գիտահետազոտական

նախագծային ինստիտուտ>> ԲԲԸ

Փաստաթղթի տեսակը՝ հիմնադրության փաստաթուղթ

*Արարյան ՄԱԿ օրինակ*  
*Քաղաքաշինություն*

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը՝ համատեղված համայնքի կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտևորման նախագծի հետ, մշակվել է «Քաղաքաշինության գիտահետազոտական-նախագծային ինստիտուտ» ԲԲԸ-ում, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի պատվերով (Պայմանագիր N ԿՍԲՔ-ՊԸԱՇՁԲ -14/ 57):

Բյուրեղավանն համայնքը գտնվում է երկրի ամենախիտ բնակեցված շրջանում, Նոր Հաճն և Գեղի բնակավայրերի սահմանակից Հրազդան գետի կիրճի ձախ ափին: Քաղաքը ձգված է հյուսիսից հարավ, այն հյուսիսից սահմանակից է Նուրնուս, իսկ հարավից Արզնի բնակավայրերին: Համայնքի տարածքին հարակից անցնում է միջպետական նշանակության Մ-4 ավտոճանապարհը, որով կապ է հաստատվում մայրաքաղաքի և մարզկենտրոնի հետ, ինչպես նաև հանրապետական նշանակության Հ-2 և Հ-5 ավտոճանապարհներով կապվում է հարակից համայնքների հետ:


Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը տեղադրված է Հրազդան գետի ձախափնյա հրաբխային սարավանդի սահմաններում, նրա հարավ-արևմտյան մասում: Ռելիեֆը խորդուբորդ է, լանջերի թեքությունները տարածքի արևելյան մասերում մեծ են և կտրուկ, երբեմն ուղղաձիգ: Բնույթ , ծովի մակերևույթից 865մ բարձրության վրա:

Բյուրեղավան համայնքում ներկայումս բնակվում է 10240 մարդ, հեռանկարում՝ 12400 մարդ:

Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև +39°С, իսկ ձմռանը -30°С): Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 306մմ:

Բնակավայրի տարածքի կառուցապատումը ներկայացված է բնակելի կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների կենտրոնացած տեղակայմամբ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 382.95հա: Համայնքի հողերից 6.16հա ներկայումս ունի գյուղատնտեսական նշանակություն, հեռանկարում կլինի 27.7հա: Բնակավայրերի հողերը կազմում են 243.54հա, հեռանկարում՝ 202.54հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը՝ 111.42հա, հեռանկարում՝ 111.76հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և





կոմունալ ենթակառուցվածքների հողերը՝ 14.85հա, հեռանկարում՝ 39.49 հա, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 5.52հա, ջրային հողեր՝ 1.46 հեռանկարում 1.46:

Բյուրեղավան համայնքի տնտեսության գլխավոր ճյուղերն են հացահատիկի, կերային կուլտուրաների մշակում, անասնապահությունը:

Ներկայումս քաղաքում գործում են միջնակարգ և երաժշտական դպրոցները, կուլտուրայի տունը, կապի հանգույցը, մարզադպրոցը, պոլիկլինիկան, շրջանային հիվանդանոցը:

Բնակելի տարածքները նախատեսված են հիմնականում բնակելի կառուցապատման, դրանց ենթակառուցվածքների, հասարակական նշանակության օբյեկտների առաջնային տեղակայման համար:

Անհատական բնակելի կառուցապատման համար նախատեսված գոտիներում հողամասերի չափերը սահմանվում են՝ նվազագույն 800ք.մ, առավելագույնը 1200ք.մ, նշված և գոյություն ունեցող կառուցապատման տարածքներում, հողամասերի բաժանումը իրականացնել պահպանելով առանձին հատվածների համար 10մ փողոցին հարող ճակատային մաս և հողամասերի նվազագույնը 400ք.մ մակերես: հատվածների՝

Ներկայումս քաղաքի փողոցները բավականին կանաչապատ են: Մակայն ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածների տարածքը /զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն/ կազմում է 3.4հա, որը չի բավարարում գործող քաղաքաշինական նորմերի պահանջներին:

Հաշվարկային ժամանակաշրջանում քաղաքի գլխավոր հատակագծում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը՝ զբոսայգի, պուրակ, ծառաշերտեր, նախատեսվում է ավելացնել 9.21հա-ով: Արդյունքում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կկազմի 12.61հա: Քաղաքի մեկ բնակչի ապահովվածությունը կանաչ զանգվածով կկազմի 10.2քմ/մարդ:

Բյուրեղավան քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է դեպի հյուսիս 5կմ հեռավորության վրա գտնվող /Նուռնուսի/ ջրաղբյուրներից, որոնք պարփակված են վերջերս հիմնանորոգված սանիտարական գոտու /բավարար / տեխնիկական վիճակում գտնվող ցանկապատով: Ջրամատակարարումը նախատեսվում է բնակչության խմելու-տնտեսական, արտադրական այն օբյեկտների համար, որոնց արտադրական կարիքների համար անհրաժեշտ է խմելու որակի ջուր, ինչպես նաև բնակավայրի հակահրդեհային կարիքների բավարարման համար: Ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է:

Հաշվարկների, համայնքի հեռանկարային զարգացման ժամանակաշրջանի համար խմելու որակի ջրապահանջը կկազմի մոտ 150 լ/օր:

Քաղաքը համարյա ամբողջությամբ կոյուղացված է: Այն իրենից ներկայացնում է հիմնականում բետոնե, ագրեստացեմենտե, տեղ-տեղ նաև պողպատե 6-7կմ ընդհանուր երկարությամբ խողովակաշարեր:

Կոյուղու ե/բ d-500մմ տրամագծի կոլեկտորը սկիզբ է առնում քաղաքի հարավ-արևմտյան ամենացածրադիր հատվածից, ապա միանում Աբովյան քաղաքի կոյուղու կոլեկտորին: Վերջինս իր հերթին միանում է Չարենցավան-Երևան կոլեկտորին, որով և կեղտաջրերը տեղափոխվում են մինչև Երևան քաղաքի մաքրման կայան, կեղտաջրերի համատեղ մաքրման նպատակով:

Քաղաքը չունի մթնոլորտային ջրերի հեռացման կոյուղի: Առաջարկվում է այն իրականացնել հիմնականում փողոցներով պոլիէթիլենային d=250-500մմ տրամագծի խողովակներից մոտավորապես 8-8.5կմ ընդհանուր երկարությամբ:

1-ին գոտու ՕԿՁ-ների հեռանկարային հաշվարկային ծավալը կազմում է 2726մ<sup>3</sup>, որտեղ թվով երկու 1000-ական խոր.մետր գոյություն ունեցող և ներկայումս գործող ջրամբարները պետք է լրացվեն ևս 1հատ 726մ<sup>3</sup> ծավալի ջրամբարով, իսկ նոր ստեղծվելիք 2-րդ գոտու համար ՕԿՁ-ների հաշվարկային ծավալը կազմում է 688մ<sup>3</sup>, որտեղ 1490մ<sup>3</sup> միջի վրա նախատեսվում է տեղադրել թվով երկու 344-ական խոր.մետր ծավալի ջրամբարներ:





Քաղաքի ջրամատակարարման գործող սխեման կապահպանվի, վերակառուցելով կամ ամբողջությամբ փոխելով համակարգի առանձին կառուցվածքները:

Առաջարկվում է  $d=300$ մմ պողպատե և թուջե զույգ ջրատարների փոխման ժամանակ ամբողջ ջրաքանակը՝  $67.74$ լ/վրկ մինչև  $O_4$ -ները տեղափոխել  $d=350$ մմ և  $d=400$ մմ տրամագծերի պոլիէթիլենային կամ պողպատե մեկ ջրատարով:

Քաղաքի ջրամատակարարման համակարգի գործող սխեման նախատեսվում է նաև հյուսիսային ծայրամասում լրացնել 2-րդ գոտու  $O_4$ -ներ  $Q=6.68$ լ/վրկ, շուրջ 65մ բարձրությամբ և  $2 \times 17$ կմ հզորությամբ ջուր մղող պոմպակայանով և  $d=110$ մմ տրամագծի  $L=900$ մ երկարությամբ պոլիէթիլենային ջրատարով:

Ելնելով քաղաքի զբաղեցված տարածքի առավելագույն(1515մ) և նվազագույն(1335մ) միջերից, առաջարկվում է ջրամատակարարումը կազմակերպել երկու գոտիներով, ի տարբերություն ներկայիս համակարգի, որտեղ գործում է միայն մեկ գոտի :

1-ին գոտու 1420-1380մ միջեր ունեցող տարածքի վրա ինչպես եղած, այնպես էլ նախատեսվող սպառողները կջրամատակարարվեն ներկայիս գործող և 1440մ հատակի միջ ունեցող  $O_4$ -ներից: Նույն 1-ին գոտու  $O_4$ -ներից կմատակարարվեն նաև 1380-1335մ միջ ունեցող տարածքի վրա գտնվող սպառողները, բայց կարգավորիչ կափույրներից հետո ստեղծելիք 1-ին գոտու ենթացանցով, նախապես այնտեղ ճնշումները 10-45մ չափով նվազեցնելուց հետո:

2-րդ՝ նախատեսվող գոտու 1490մ հատակի միջ ունեցող  $O_4$ -ներից կմատակարարվեն 1475-1430մ միջեր ունեցող տարածքով ընդգրկված ինչպես արդյունաբերական, այնպես էլ բնակելի օբյեկտների սպառողները:

1475մ-ից բարձր միջի վրա տեղակայված մի քանի արդյունաբերական ձեռնարկությունների ջրամատակարարումը կկազմակերպվի ներկայումս չգործող, բայց առկա համակարգով, որը սկիզբ է առնում «Մաքրավանի» աղբյուրներ - Աբովյան ջրատարից:

Որպես տարբերակ, «Մաքրավանի» աղբյուրներ-Աբովյան ջրատարից սկիզբ առնող ջրագիծը կարելի է օգտագործել նաև նախատեսված 2-րդ գոտու  $O_4$ -ներին ջրով ապահովելու նպատակով, վերը նշված պոմպակայանի փոխարեն, եթե Հրազդանի «Մաքրավանի» աղբյուրներում առկա լինի լրացուցիչ անհրաժեշտ  $7$ լ/վրկ ջրաքանակ, իսկ ջրատարը և դրա ճյուղն ունենա այդքանով ավելի թողունակություն: Նշված  $7$ լ/վրկ ոչ մեծ ջրաքանակը կարելի կլինի ստեղծել ի հաշիվ Աբովյան քաղաքի համակարգում առկա կորուստների կիճատման:

Ջրամատակարարման ցանցի այսպիսի գոտիավորումը թույլ կտա վերացնել «Բ» և «Հայրենադարձ» կոչվող թաղամասերի փոքր պոմպային կայանները, դարձնելով դրանց ջրամատակարարումը համարյա շուրջօրյա (ինչպես դա իրականացվում է քաղաքի հիմնական մասում) և հնարավոր հրդեհների մարման համար օգտագործել  $O_4$ -ներում պահպանվող «անձեռնամխելի» համարվող հակահրդեհային ծավալները:

Առաջարկվում է նաև ջրամատակարարման փակուղային գործող ցանցը վերակառուցել օղակային ցանցի:

Գոյություն ունեցող ոռոգման համակարգն հիմնանորոգվելու է, ընդլայնվելու է և քաղաքի հասարակական ու անհատական կանաչ տարածքների պահպանման և ջրամատակարարման ժամանակացույցի տևողությո ւ նը երկարացվելու է, ի հաշիվ առկա և խոշոր չափերի հասնող կորուստների կրճատման:

Քաղաքի ընդլայնման ենթակա հատվածից ստացվող կեղտաջրերը, շուրջ  $15.31$ լ/վրկ ելքով, նախագծման ենթակա կոյուղու ցանցով կհավաքվի թաղամասի հարավային հատվածում, ապա  $d=200-250$ մմ տրամագծի և  $L=1100$ մ երկարությամբ կոլեկտորի միջոցով կտեղափոխվի մինչև քաղաքի  $d=500$ մմ տրամագծի գլխավոր կոլեկտորի սկզբնական հատված:

Բյուրեղավանի էլեկտրամատակարարման աղբյուրն է հանդիսանում  $2 \times 16$ ՄՎԱ հզորությամբ 110/10կՎ «Բյուրեղավան» ենթակայանը: Ենթակայանի սնուցումը ներկայումս իրականացվում է 110կՎ մագիստրալ օղային գծերով:

- 5.52կմ երկարությամբ «Լուսակերտ» գծով (AC-150)- $4 \times 56$  մՎԱ «Արգել» ՀԷԿ-ից
- 5.9 կմ երկարությամբ «Աբովյան» գծով (AC-150)- $2 \times 40$  մՎԱ «Աբովյան» ենթակայանից

Գլխավոր իջեցնող ենթակայանից դեպի կառուցապատման ենթակա տարածքներ ցանցը զարգացվում է 10կՎ մալուխային մագիստրալ սխեմայով առանց հանգուցային բաշխիչ կետերի: Նշված տարածքների էլեկտրամատակարարման համար նախատեսված են թվով 3 հատ նոր 10/0.4 կՎ ենթակայաններ և 6կմ ընհանուր երկարության 10կՎ երկմալուխային



զծեր 110/10ԿՎ «Բյուրեղավան» ենթակայանից : Մնուցման սխեմայի մեջ ընդգրկված են նաև գործող ենթակայաններ:

Տարածքի բազմաբնակարան և քաղաքացիական նշանակության շենքերի ջերմամատակարարման համար նախատեսված է 6 հատ տարբեր հզորության կաթսայատներ, և 0.3կմ մայրուղային 4 խողովականի ջերմային ցանցեր:

Չարգացվող տարածքի գազամատակարարման համար սնող աղբյուր է հանդիսանում գոյություն ունեցող ԳԿԿ-ն, որտեղ նախատեսվում է ավելացնել ելքի նոր ճյուղավորում համայնքի տարածքային զարգացման համար: Գազի հաշվարկային ծախսերը նախատեսված են կենցաղային կարիքների (գազային սալիկ), տաք ջրամատակարարման և ջեռուցման համար: Ընտրված է գազատար խողովակների տեղադրման ստորգետնյա տարբերակ ժամանակակից պոլիէթիլենային խողովակներից:

Ներկայումս գործող գերեզմանոցը /փաստացի 7.2 հա/ գտնվում է քաղաքի հյուսիսային մասում, նախագծով նախատեսվում է համայնքի գոյություն ունեցող գերեզմանոցի ընդլայնում, որի կազմակերպման համար հատկացվել է 4,1հա հողատարածք:

Քաղաքի արդյունաբերական գոտու և բնակելի տարածքի միջև ընկած բնակավայրի այլ հողերից 17.2հա տրամադրվել է գյուղատնտեսական /պտղատու այգի/ մշակության համար, որը արդյունքում կծառայի նաև որպես սանիտարապաշտպանիչ գոտի:

Ներկայումս իրականացման փուլում է Կոտայքի մարզի աղբահանության կառավարման ծրագիրը, որի շրջանակներում Հրազդանում կկառուցվի նոր ժամանակակից աղբավայր: Ծրագիրը նախատեսում է բնակավայրերում կազմակերպել փոքր տարողությամբ աղբահավաք վայրեր, որտեղից պարբերաբար աղբը կտեղափոխվի Հրազդան քաղաքի աղբավայր:

Գլխավոր հատակագծով նախատեսվում է գոյություն ունեցող չկազմակերպված աղբանոցի տեղում կազմակերպել աղբաընդունման և տեղակայման վայր, որում աղբը մասնակիորեն կդասակարգվի և հետագայում կտեղափոխվի Հրազդան քաղաքի աղբավայր:

Բյուրեղավանի համայնքապետարանում տեղի են ունեցել <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված հանրային քննարկումները, որոնց ընթացքում հնչած առաջարկությունները հաշվի են առնվել նախագծի լրամշակումների ընթացքում և հանրության կողմից հավանություն է արժանացել: Հատակագծում լուծված են կեղտաջրերի մաքրման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի նվազեցման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Ընդհանուր առմամբ հեռանկարային զարգացման ընթացքում գլխավոր հատակագծում նախատեսված միջոցառումների արդյունքում Բյուրեղավան համայնքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջ

Հիմնադրության փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Քաղաքաշինության գիտահետազոտական և նախագծային ինստիտուտ>> ԲԲԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Չ. Զուռնայան